ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ԳԱԼՈՒՍՏ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սահակյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Էդմոն Մարուքյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-703-22.01.2015-ՄԻ-010/0) վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 1192-րդ հոդվածի համաձայն՝ կտակը միակողմանի գործարք է, իսկ 299-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործարքների նոտարական վավերացումը պարտադիր է սույն օրենսգրքում նշված դեպքերում: Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1205-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կտակը վավերացնում է նոտարը՝ «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Կտակը, որպես միակողմանի գործարք, կարող է ինչպես լրացվել և փոփոխվել, այնպես էլ՝ վերացվել: Ինչպես Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանն է նշել իր 2014 թվականի փետրվարի 25-ի ՍԴՈ-1140 որոշման մեջ՝ կտակը վերացնելու մասին դիմումն ունի միակողմ գործարքի հատկանիշներ, այն միակողմ կամքի արտահայտմամբ ուղղված է քաղաքացիական իրավունքների և պարտականությունների դադարմանը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը թեև ուղղակիորեն չի ամրագրում կտակը վերացնելու մասին դիմումի նոտարական վավերացման պահանջ, սակայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1202-րդ և 1203-րդ հոդվածների համակարգային վերլուծությունից բխում է, որ կտակը վերացնելու մասին հայտարարությունը (դիմումը) պետք է վավերացվի նոտարի կողմից:

«Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածը նախատեսում է կտակի վերացման կարգը: Այսպես, կտակը վերացվում է կտակը վերացնելու մասին դիմում ներկայացնելու կամ նոր կտակ կազմելու միջոցով: Կտակը վերացնելու մասին դիմում ստանալու դեպքում նոտարը դրա մասին նշում է կատարում նոտարական գրասենյակում պահվող կտակի օրինակի վրա և նոտարական գործողությունների գրանցամատյանում: «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ներկայիս կարգավորմամբ կտակը վերացնելու մասին դիմումի վրա եղած ստորագրությունը պետք է վավերացնի նոտարը, և այդ առումով նշված դրույթը հակասության մեջ է մտնում ինչպես Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1202-րդ և 1203-րդ հոդվածների՝ կտակի վերացման մասով կարգավորման, այնպես էլ՝ «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի հետ, որի համաձայն նոտարը վավերացնում է այն բոլոր փաստաթղթերի վրա եղած ֆիզիկական անձանց ստորագրությունների իսկությունը, որոնք չունեն գործարքի բնույթ: Մինչդեռ կտակը վերացնելու մասին դիմումը միակողմանի գործարք է, և դրա վրա «Նոտարիատի

մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասը տարածվել չի կարող:

Ելնելով շարադրվածից, գտնում ենք, որ «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 5-րդ մասից դրա երկրորդ նախադասությունը հանելու անհրաժեշտություն չկա: Միաժամանակ հարկ է նշել, որ ինչպես Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը, այնպես էլ՝ «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն ուղղակիորեն չեն ամրագրում կտակը վերացնելու մասին դիմումի նոտարական վավերացման պահանջ, և առավել նպատակահարմար է այդպիսի դրույթի նախատեսումը «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում, որի 1-ին հոդվածով սահմանվում են Հայաստանի Հանրապետությունում նոտարների գործունեության իրավական հիմքերը, նոտարական գործողությունների իրականացման կարգը և նոտարներին առաջադրվող հիմնական պահանջները: Հետևաբար, նշված օրենքը պետք է նախատեսի Հայաստանի Հանրապետության նոտարների կողմից նոտարական գործողությունների և ծառայությունների իրականացման կարգ, այդ թվում՝ կտակի և կտակը վերացնելու մասին դիմումի նոտարական վավերացման հստակ իրավական կարգավորումներ՝ հիմք ընդունելով նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1205-րդ հոդվածի 1-ին մասը, որի համաձայն նոտարը կտակը վավերացնում է «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: Հարկ է նշել, որ կտակի վերացման մասին դիմումի նոտարական վավերացման պահանջի նախատեսում առկա չէ նաև «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի 4-րդ մասում, որի երկրորդ նախադասությունը նախատեսում է կտակի վերացման նոտարական վավերացում և ոչ թե կտակը վերացնելու մասին դիմումի նոտարական վավերացում:

Ուստի, կտակի վերացման հետ կապված հարաբերության հստակ կարգավորման համար անհրաժեշտ է ոչ թե «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության

օրենքի 56-րդ հոդվածի 5-րդ մասից դրա երկրորդ նախադասությունը հանել, այլ՝ այն շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Կտակը վերացնելու մասին դիմումը վավերացնում է հիմնական կտակը վավերացրած նոտարը:»:

Գտնում ենք, որ մեր կողմից առաջարկվող խմբագրությունը համահունչ է ինչպես Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով նախատեսված կտակի վերացման իրավական կարգավորմանը, այնպես էլ՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի կողմից 2014 թվականի փետրվարի 25-ի ՍԴՈ-1140 որոշմամբ ամրագրված իրավական դիրքորոշմանը:

Միաժամանակ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 26-ի N 53 նիստի «Նոտարիատի համակարգի զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին» արձանագրային որոշման համաձայն՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից մշակվում է «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը, և այդ առումով մեր կողմից ներկայացված առաջարկությունը ներառվելու է նշված նախագծում:

Ելնելով շարադրվածից, Հայաստանի Հանրապետության կառավարությունն օրենսդրական նախաձեռնության հեղինակին առաջարկում է իր բարձրացրած հարցը դիտարկել առաջիկայում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի քննարկմանը ներկայացվելիք «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի շրջանակներում:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի առաջին տեղակալ Արսեն Մկրտչյանը:

Օրենքի նախագծի ընդունման դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման կամ այլ իրավական ակտի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Կից ներկայացվում են օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Հարգանքով՝

ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ**

«Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման դեպքում

«Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումն առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

Եզրակացություն

**«Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման**

«Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաոլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն.**

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն:**

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման**

1. «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ օրենք) ընդունման արդյունքում մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման**

«Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծով *հստակեցվում են կտակը վերացնելու մասին դիմումի վրա եղած ստորագրության վավերացմանը վերաբերող դրույթները* և Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն ***չի նախատեսվում:***

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման**

«Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) հստակեցվում են կտակի վավերացման հետ կապված հարաբերությունները:

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ առանձին ապրանքային խմբի շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ առանձին ապրանքային խմբի շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերելու* եզրակացություն:

## ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ**

«Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

**Եզրակացություն**
**«Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի**
**բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ**

«Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը՝ ընդունվելու կամ չընդունվելու դեպքում, ՀՀ պետական և համայնքների բյուջեների մուտքերի և ելքերի, ինչպես նաև բյուջետային բնագավառում քաղաքականության փոփոխմանը չի հանգեցնում:

*ՆԱԽԱԳԻԾ*

*Պ-703-22.01.2015-ՄԻ-010/0*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՕՐԵՆՔԸ**

**«ՆՈՏԱՐԻԱՏԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

***Հոդված 1.*** «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի դեկտեմբերի 04-ի թիվ ՀՕ-274 օրենքի 56-րդ հոդվածի 5-րդ մասից «Կտակը վերացնելու մասին դիմումի վրա եղած ստորագրությունը պետք է վավերացնի նոտարը:» նախադասությունը հանել:

***Հոդված 2.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ**

**«Նոտարիատի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման**

Սույն նախագծի ընդունումը պայմանավորված է հետեւյալ հանգամանքների առկայությամբ.
համաձայն «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 36-րդ հոդվածի՝ ի թիվս այլ նոտարական գործողությունների, նոտարը՝
- վավերացնում է գործարքներ (պայմանագրեր, կտակներ, լիազորագրեր, համաձայնագրեր եւ այլն),
- վավերացնում է փաստաթղթերի վրա եղած ստորագրությունների իսկությունը:
Օրենքը նախատեսում է հատուկ դրույթ կտակների վավերացման վերաբերյալ: Մասնավորապես, 56-րդ հոդվածի 1-ին մասի ուժով՝ նոտարը վավերացնում է գործունակ անձանց կտակները, ինչը նշանակում է, որ կտակը՝ որպես գործարք է վավերացվում նոտարի կողմից: 4-րդ մասով սահմանվում է, որ կտակի վերացումը կամ դրանում փոփոխություններն ու լրացումները վավերացնում է հիմնական կտակը վավերացրած նոտարը: Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ կտակը վերացնելու մասին դիմումի վրա եղած ստորագրությունը պետք է վավերացնի նոտարը, ինչը նշանակում է, որ կտակի վերացման գործարքը, որը ինչպես կտակը, անձանց համար իրավական հետեւանքներ առաջ բերող միակողմանի գործարք է, վավերացվում է ոչ թե այնպես, ինչպես գործարքը, այլ Օրենքի 67-րդ հոդվածի կարգով, մասնավորապես՝ գործարքի բնույթ չունեցող փաստաթղթերի վրա եղած՝ ֆիզիկական անձանց ստորագրությունների վավերացմանը համանման: Ըստ նույն հոդվածի 2-րդ մասի՝ այս դեպքում նոտարը չի հավաստում կամ հաստատում փաստաթղթում շարադրված փաստերը, այլ սոսկ հաստատում է, որ ստորագրությունը կատարել է որոշակի անձ: Այնինչ, կտակի վերացումն ինքնին միակողմանի գործարք է եւ, հետեւաբար, այն նոտարի կողմից պետք է վավերացվի գործարքների վավերացման կարգով, ինչը համահունչ է նաեւ Օրենքի 56-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներին:
Տվյալ խնդրին մանրամասն անդրադարձել է նաեւ Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանն իր 2014թ. փետրվարի 25-ի ՍԴՈ-1140 որոշմամբ, որտեղ մասնավորապես նշվում է որ կտակների հետ կապված իրավահարաբերությունների առնչությամբ «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի փաստացի կիրառումը եւ այդ երեւույթի նկատմամբ դատական պրակտիկայում առկա մոտեցումները, ինչպես նաեւ նույն օրենքի 56-րդ հոդվածի իրավակարգավորումների ոչ հստակությունը կարող են մարդկանց իրավունքների խախտման լուրջ պատճառ դառնալ:
Ներկայացված նախագծով վերոնշյալ խնդիրը կարգավորվում է: